

ՅՈՅՍ

Յոյսն, կ'ըսէ Դիոնեսիս, մահկանցուացքարերար աստուածն է. Յոյնք Էլուս Ելպիս կը կոչէին զայն, իսկ Հռովմայեցիք *Spes* Արէս. Հռովմ մասնաւոր երկու փառաւոր տաճարներ կանգնած էր Յուսոյ, մէկը Վիրիտարիոյ մէջ, միւսն ալ քաղքին եօթներորդ թաղին մէջ: Ուղինը՝ Տիտոս Լիւսին ըսածին համեմատ, կայծակէ զարնուեցաւ և յետոյ հրկիզութեամբ մը բոլորովին աւերակ դարձաւ: Բանաստեղներէն ոմանք զՅոյսը՝ Քնոյ և Մահուան քոյր կ'անուանեն, վասն զի երկուքն ալ թշուաւներու ակնկալութիւններն են: Պինդար մնունդ ծերոց կը կոչէ:

Սովորաբար Յոյսը՝ ընդ կերպարանք մատաղ օրիորդի նկարուած կը տեսնանք Հռովմայեցւոց միտալներուն վրայ, որ ոտքի վրայ կեցած մէկ ձեռքով զգեստը կը բռնէ՝ միւսովն ալ ծաղկի մը կը բարձրացնէ: Կայ ուրիշ խորաքանդակ մ'ալ, յորում այս աստուածը ոտքի վրայ կեցած և ծաղիկներով պասկուած, ձախ ձեռքով խաշխաշէ և հասկէ պսակ մը կը բարձրացնէ, և աջովն ալ սեան մը կոթնած, զուարթ երսով դիմացը եղած դաշտին վրայ կը նայի՝ ուր գեղեցիկ ծաղիկներ և ատոք հասկեր կը բռւսնին:

Խիստ հանճարաւոր են այս դրուագները, վասն զի շատ անգամ մարդուս յուացածը կամ ինչք է և կամ հաճոյք, Յոյսն ալ ժամանակաւ մոռցնել կու տայ իրեն նեղութիւնները: Ուրեմն հասկէ ուրիշ, աւելի ինչ յարմարագոյն բանով կարելի պիտի ըլլար բացատրել ինչքը. կամ ծաղկէ ուրիշ ինչ բան կրնայ աւելի լաւ բացատրել հաճոյքը. Խաշխաշէն զատ ո՞ր բան կրնար մեկնել շարեաց մոռացութիւնը: Դաշտն ալ որ անբաւ գանձեր իր մէջը փակած կը ծածկէ, գանձեր՝ որ բոլորովին վաստակոց պտուղ չեն, այս իմաստիս շատ լաւ յարմարած են:

Լամպրիդիս կը սորվեցնէ մեզի թէ Հռովմ՝ հին և նոր Յոյսը կը զանազանուէին մէկմէկէ: Բարիզու թանգարանին մէջ եղածը, սովորական յատկութիւններէն զատ, ունի նաև թներ ալ, և պէտք է խոստովանիլ որ թեերն ամբողջապէս կը պատշաճին Յուսոյ:

Սղոշի հաւաքման մէջ զմրուխտէ կնիք մը կայ, յորում Յոյսը ոտքի վրայ կեցած կը նայի ուշադրութեամբ, աջ ձեռքով ալ ծաղիկ մը բռնած՝ որ է իրեն սովորական նշանը. ուրիշ քանդակներու վրայ միշտ խաշխաչներով և հասկերով զարդարուած է:

Այս կնիքը հանդերձ մի և նոյն հաւաքման մէջ եղած ուրիշ երեք Յոյսերով, ոչինչ նուազ քան զԵւրոպացւոց տարազը՝ զարդարուած են, թէպէտեբաղադրութեամբ բոլորովին կը տարբերին: Կարելի է նկարչին կերպը, այսինքն հասկաց մէկմէկու զուգահեռական ըլլալը սեփիհական ըլլայ Յուսոյ: Կղօղիոսի և Փիլիպպոսի արաբացւոյն միտալներուն վրան քանդակուած նոյն աստուածուհւոյն զգեստները ինչպէս որ նաև Լուդովիզի Հռովմայ գեղին մէջ եղած արձանին զգեստները՝ մի և նոյն կերպն են: Այս արձանը որ է երկու ոտք բարձր, իր պատուանդանին վրայ այս հետեւեալ զրուածը ունի.

AQVILIVS . DIONISIVS . ET NONIA
FAVSTINA . SPEM . RES . TITVERVNT.

ԱԿՈՒՏԼԻՈՍ, ԴԻՈՆԻՍԻՈՍ ԵՒ ՆՈՒԻԱ
ՓԱՒՏՈՒԱ ԶՑՈՑՍՆ ԷԱԿ ԱՆՈՒՑՆԵՑԹԱ.

Արդի հեղինակները զՅոյսը վերջին աստուածուհի կը կոչեն, վասն զի յետին վտանգի մէջ թշուաւնները երեսէ կը թողու: Դիոդինէս առաջուց ըսած էր որ Յոյսն վերջին բանն է որ կը մնայ կենաց մէջ: Ուրիշ բանաստեղծ մ'ալ կ'աւելցընէ թէ կը միսիթարէ գերիները իրենց շղթայից արհաւրաց մէջ. Երկաթներով կը հնչեն իրեն անդամները՝ բայց ինքը ուրախ զուարթ կ'աշխատի ու կ'երգէ: Բանաստեղծք որ կը սիրեն կրից

շարժիչը, խարերայ և անստոյդ կը կո-
չեն զասիկայ .

Spes vaga pectora ludit.

Պատրանք սրտից՝ Յոյս յեղյեղուկ։
Գոլինս անգղիացին՝ փափուկ նայուած-
քով, դիւթիւ ժպիտով և խարտեաշ
մազերով Աստուած մը կ'ենթադրէ ըզ-
թոյս :

Ա. Ր Կ Ա. Ծ Ք

Ի Խորտակման հաշու միոյ ¹.

Ալիքն զիզացեալ էին, և ծովն առ-
հասարակ փոխեալ էր 'ի փրփուր եռա-
ցեալ, և հրազէնք ² ամենակալին որո-
տալով որոտային, և երկիր սասանէր։
Ի հարկանել նաւուն ընդ յատակ՝ ան-
դէն և անդ խորտակեալ փշրէր որպէս
ունդ յարդի հոսեալ հեծանոցաւ։ Այլ
յառաջ քան զայն նաւապետն վազվա-
զէր 'ի խելս նաւուն, բարձեալ երկուս
ինչ փոքունս, մէն 'ի միում բազկի։ ։
զմանկիկն իւր և զդստրիկն փոքրիկ։
Երկայն էին վարսք նոցա և ծածանէին
զերեսօք նոցա . և մինչ այն ինչ պրծեալ
զնա համարէաք՝ զթեալ անկաւ . այլ
պնդապինդ ունէր զնոսա 'ի գրկին։ Իսկ
ամբոխնաւորդացն . աւազ թշուառա-
կանացն . կոհակք հարեալ կորզեցին
զնոսա . կէպ ջախջախեցան, կէպ կուր
եղեն փրփրացեալ ալեացն, այլք ան-
կան դիտապաստ . շունչն ցանկալի ե-
լիք սարտեաւ 'ի նոցանէ . ոչ ոք 'ի խոր-
տակեալ բեկորոյ անտի՝ յորոյ վերայ
կոռւեալն կայր՝ ոստեաւ 'ի տախտա-
կամած անդր, բուռն հարկանել զձե-
ռաց որ կարկառէին հասանել 'ի նոսա .
այլ յորսայսեալք անկանէին և կային
մնային մեծաբաց աչօք : Իսկ նաւապետն
կոռւեալ կայր միայնակ կենդանի։ Ա-
զերսէին նմա և ասէին . Նաւապետ, ե-

թէ սիրես զԱստուած, ընկեա այսր
զտղայքդ : Իւ նա ընկէց զմին, զղեռա-
բողբոջ մանկիկն երկամեայ . բայց ալիք
ծովուն կորզեցին զնա 'ի լպրծուն դա-
րափանցն և ընկլուզին 'ի խորս . տե-
սին զնա, լուան զձայն զճիչ աղաղակի
նորա . Յայնժամ ել կանգնեցաւ, ամ-
բարձ զտղայն զմիւս . և ամենայն ամ-
բոխ ժողովրդեան մերոյ կարկառեալ
զգորովալիր բազուկսն՝ աղաղակէր . ըն-
կեա այսր, ընկեա այսր . և նա արար
այնպէս . պարզեաց զաջ իւր 'ի կուրծս
կոյս գեղջ երիցուն . և 'ի նմին պահու-
ալիք մեծակուտակ զեղաւ 'ի վերայ նո-
ցա : Եւ որք տեսինն զայն 'ի ծովեզե-
րէն՝ ասէին, եթէ ընկլուզին ալիք զնըշ-
խար նաւուն և մանր խորտակեցին, որ
պէս կին զի արկեալ զձեռան 'ի հայս՝
մանրեալ փշրիցէ զշառաշիղ աղի 'ի վե-
րայ ուռուցելոյ հացին : Զգեալ հանաք
զմարդիկն մեր . երկուք 'ի նոցանէ մե-
ռեալք էին, կոծեալք 'ի ծովէն, և գր-
լուկք նոցա անկեալ կախեալ կային :
Բազուկք գեղջ երիցուն մերոյ թա-
փուրք էին . քանզի ալիք կորզեցին ըզ-
գեղցիկն, զգեղցիկ գառնիկն : Բա-
զում անգամ տեսանեմք արդ զերէցն
մեր կանգուն առ երի տապանի աղջ-
կանն փոքրկան . բայց նա անպարտ է 'ի
վնասուէն, անպարտ է 'ի վնասուէն :

ԻՆՃԵԼՈՒ ԱՆԴՂԵՑԻ :

Կ Ա Լ Կ Ա Դ Ա

Բարեկամ Հնդկաստանի ըսուած
անդղիական օրագիրը հետեւեալ տեղե-
կութիւնները կու տայ կալկադայի վը-
րայօք :

« Գիտնալու է որ կալկադա լոն-
տրայի նման քաղաք մ'է, կեղրոն վա-
ճառականութեան, և զետին ափանցը
վրայ երկու կողմէն արուարձաններ ու-
նի . կալկադա իրեք մեծ մաս կը բաժ-

1 Grace նու Սուտէրլէնտայ :

2 Հանթք կայծականց :

1 Հեղինակն՝ քաղցեալ բազուկս ասէ :